ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

18.11.2024 12:44

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և ՄԱԿ -ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում նոյեմբերի 16-ին և 17-ին տեղի է ունեցել աշխատաժողով հանրային պաշտպանների համար:

Ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը և ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ:

Քննարկվել են ապաստանի իրավունքի միջազգային և ներպետական հիմնական չափանիշներն ու սկզբունքները, ապաստանի վարույթը, ընթացակարգային առանձնահատկությունները, բողոքարկումը և այլ հարցեր:

Աշխատաժողովն իրականացվել է Բյուրականում՝ ՄԱԿ -ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ֆինանսավորմամբ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })